մայնքի անդամներից, առավել ևս նրա շար կանանցից, եթե որսը ճանապարհին տրվում էր ոչ միայն ամեն համագյուղացու, այլ ամեն պատահողի, այս ամենը կարող էր բխել կենդանիների պաշտպան ոգիների վրեժխնդրության երկյուղից։ Որսից բաժին հանելով ամեն պատահողի՝ նրան կաշառում էին։ Նույնպես և հարևաններին, որ նրանք չխոսեն որսի մասին, մանավանդ այդ որսի մասին չիմանան շար կանայք, որոնք մի որոշ կապ են պահպանում առհասարակ ոգիների, նաև կենդանիների ոգիների հետ և կարող են գրգռել նրանց վրեժխնդրությունը։ Կենդանական աշխարհը չի կտրվում մարդկային աշխարհից, այնտեղ էլ պահանջվում էր հարազատի համար վրեժխնդրություն, ինչպես դա պահանջվում էր բոլոր երկրներում նախնական մարդկային հասարակության մեջ։ Զանգեզուրումն էլ հաճախ պատմում են, ինչպես և Լոռում[66], թե որսի ժամանակ հանկարծ որսորդի առջև կանգնել է մեկը ու կանչել. «Ո՞ւր ես խփում իմ եղնիկին»։ Նաև այդ պաշտպան ոգուց ծածուկ մնալու համար է, որ որսի գնալիս ճանապարհին և հենց որսի միջոցին չպետք է խոսել, չպետք է ընկերոջ անունը տալ, որսն էլ պետք է ծածուկ պահել, մանավանդ շար կանանց աչքից և լեզուներից, որսի այսպես կամ այնպես ամեն մի վկա պիտի մի բաժին ստանալով կաշառվի ու մեղսակից դառնա որսորդին և լոի։

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այգիների տարածությունը Զանգեզուրում շատ փոքր է եղել։ Սիսիանի և Գորիսի շրջաններում պտղատու ծառերը և մասամբ խաղողի որթը պատահում էին միայն խոր ձորերի հատակներին, որտեղ ծառերը պաշտպանված էին քամիներից և ցրտից։ Կայանում պտղատու ծառերն ու խաղողի որթը տնկված էին ավելի բաց մակերեսների վրա, բայց այստեղ էլ այգիներն ու պարտեզները շատ սահմանափակ տարածություն էին բռնում։ Թվում է, թե դա է պատճառներից մեկը, որ Զանգեզուրում պաշտվող սուրբերի մեջ Աստվածածնի պաշտամունքը շատ թույլ էր ներկայացված, որչափ կարելի է դատել այն հանգամանքից, որ նրա անունով եկեղեցիներ շատ քիչ են պատահում (Դարաբաս, Բռնակոթ, Շինուհայր)։ Նկատված է, որ, օրինակ՝ Արարատյան դաշտում բոլոր այն վայրերում, որտեղ այգեգործությունը գյուղատնտեսության գլխավոր ճյուղն է, սկսած Աշտարակից մինչև Ագուլիս և նույնիսկ Մեղրիում, գրեթե բոլոր եկեղեցիները նվիրված էին Աստվածածնին, որի տոնի հետ էր կապված նաև խաղող օրհնելու օրը, որն այնտեղ կատարվում էր առանձին հանդիսավորությամբ և խոշոր հասարակական տոնախմբության բնույթ էր կրում։

Խաղողի որթի համար Զանգեզուրն իր տեղական անունն ունի՝ կոէղնի[67]։

---

[66] Տե՛ս Հովհ. Թումանյանի «Եղնիկի տերը»։ Այսպիսի ոգիներ ունեն սվանները՝ Ափսատ կամ Ափսասխ և Դալ, աբխազները՝ Աժվէփշաք, օսերը՝ Ավսաթի, չերքեզները՝ Մազիթխ։ Տես՛ Марр Н. Я., Фрако- армянский Sabadzios и Aswat и сванское божество охоты, „Известия“ АН, 1912 г., № 13.

[67] Թրքերի մոտ՝ թանգ։ Այլ պտուղներից բուծվում էին տամբոլ՝ սալոր, ճղուպուր՝ ընկույզ, տկօղին՝ կաղին, խնձոր, տանձ, գիլաս, գիլանի՝ բալ։ Պտուղը քաղելու համար ճյուղը կոտրում են կէրչանավ—ոստի կեսը կտրած կեռածայր ճիպոտով։